

ՅԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ԴԴ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 30

16 ՅՈՒՆԻՍ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ Եկեղեցականութիւնը

Գրիգոր Պատուելի Փէսիմալեան

«Խաբում Աղջիկը»

Կարապետ (Գեորգիւմ)

Գեորգի Գրականութեան Դէմք

Հայ Երաժշտականութիւնը

Մասիսի Գրական Մրցումն Արդիւնք

Մեր Կեանքէն

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԻՆԱՍ ԾԱԼԵԱՆ

ՄԱՌՍԷԼ ԲՈՒԿՈ

ՌՈՒԲԷՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԵԼԻՔ ԹԷՎԷԲԷԼ

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

1907

ՊԱԼՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստ Ֆրանք 9,500,000

Վերապահովագրական

Դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱԼՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն. : Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զիւրաւատչելի պայմաններով . իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է . կը կատարէ խառն ապահովագրութիւն , ընտանեկան , մանուկներու , եւն . եւն . :

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ
ալաքիա, Տեօյլէ Օրիէնդ Պանքի կից, Սինասոն Խան. (2)

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակռայի ցաւով՝ դայն քաշել կուտայ ճարտար ատամնորոյժի մը , կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կուտայ ակռան , կամ գոռոցնի մէջ առնել կուտայ , ա՛լ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին : Խնդիր է սակայն միշտ՝ լա՛ւ , ճարտար ու արուեստին զաղանիքներուն գիտակ՝ ատամնաբոյժ մը գտնել : Այս նպատակին համար առանց վարանելու և գոհ մնալու մեծ ապահովութեամբ պէտք է դիմել հանրածանօթ ատամնաբոյժ Խաչիկ Էֆ. Ժամկոչեանի , որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն : Դիմել Պահչէ-Դարու :


ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարմանէ ամէն տեսակ ակռայի և լինտի հիւանդութիւնները , փտած ակռաները կը լեցնէ՝ առողջ ակռաներու պէս երկար ատեն գործածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ , նուրբ , ճաշակաւոր և դիմացկուն արուեստական ակռաներ կը պատրաստէ , բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ , Բերա , Մեծ Բարմաք-Դարու , թիւ 8 : Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգ շաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատան մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի :



Կը գտնուի բոլոր զեղազօրծներուն քով :

Թուրքիոյ ներկայացուցիչ Ո . Սօլաքեանց .

Կ . Պոլիս :

Գերմանացի գիտնական և Պետական մասնաւոր խորհրդական ու Ռայխսդակի անդամ Տօքթ. Գօրնէլիուս Գուրլիդ, որ վերջերս մայրաքաղաքս եկած էր, հնութիւններ տեսնելու և ուսումնասիրելու համար, այցելած էր նաեւ Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցին, որուն Պօղոս Պետրոս մատուռին հնակերտ դուռը ուշադրութիւնը գրաւելով, անոր մանրանկար լուսանկարը առած էր: Տ. Գրիգորիս Վ. Պալաքեան, նոյն եկեղեցիին քարոզիչը, զինքը հիւրընկալած և հնախօսական բացատրութիւններ տուած ըլլալով, այն ատեն, գերմանացի գիտնականը Պերլինէն Պալաքեան Վրդ.ին դրկած է նոյն մատուռին դուռին մեծադիր լուսանկարը, որուն վրայ կը նշմարուին գերմաներէն արձանագրութիւններ և քանդակներ: — Գահիրէի Գալուստեան Ազգ. Վարժարանը, զոր Վսեմ. Պօղոս փաշա Նուպար հիմէն վերաշինած էր իր անձնական ծախքով, աւարտեր է, և բացումը անցեալ երկուշաբթի տեղի ունեցեր է, ներկայութեամբ Տ. և Տիկին Պօղոս փաշայի և իրենց զաւակներուն՝ Առաքել պէյ Նուպարի, Վահրամ պէյ Նուպարի և Նուպարեան գերդաստանի միւս անդամներուն, ինչպէս նաեւ Գահիրէաբնակ բազմաթիւ ծանօթ ազգայիններու: — Նշանախօսութիւններու և հարսնախօսութիւններու համար ծրագիր մը պատրաստուած է Ս. Պատրիարքին կողմէ, խորհրդակցութեամբ Պատրիարքարանի զիւանապետներու և պիտի մատուցուի Բաղաք. Ժողովի առաջիկայ նիստին: Այս ծրագիրը վեց աստիճանի բաժնած է նշանախօսութիւնները և հարսնախօսութիւնները, որոնք պիտի ճշգուիս թաղ. Խորհուրդներու միջոցով: Իւրաքանչիւր աստիճանին գումարը պիտի բաժնուի երեք մարմիններու միջեւ, Պատրիարքարան, Հիւանդանոց և Բահանայ, հաւասարապէս: — Ս. Պատրիարքը նկատելով որ Արմաշի Խնամակալութիւնը կազմալուծուած վիճակի մէջ է, գումար մը յանձնեց Տ. Թորգոմ Ծ. վրդ.ին՝ Դպրեվանքի ընթացիկ ծախքերուն համար, որոնք պիտի հատուցուին առաջիկային, Արմաշի ուխտագնացութեան և ուրիշ հասոյթներէ: Դպրեվանքի Տեսուչը երկուշաբթի օր մեկնեցաւ Արմաշ: — Խառն Ժողովի որոշումով Ս. Պատրիարքին յանձնուած ըլլալով Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին պաշտօնական յարաբերութեանց խնդիրը կարգադրելու համար պէտք եղած բանակցութիւնը կատարել, Ն. Սրբադնութեան և Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին միջեւ թղթակցութիւններ փոխանակուած էին: Ս. Նախագահը Ժողովին վերջին նիստին մէջ տեղեկութիւններ հաղորդեց այս բանակցութեանց վրայ և Ժողովը գոհութեամբ լսեց զանոնք, յոյս յայտնելով որ բանակցութիւնները կը յանգին փափաքուած արդիւնքին: — Ս. Երրորդութիւն եկեղեցիին Հարիւրամեակի հանդէսին նկարագրութիւնը, ինչպէս անոր յաջորդող գրական հանդէսին մէջ կարդացուած ուսումնասիրութիւնները հատորի մը մէջ ամփոփելու և գրական յիշատակարան մը կազմելու փափաք յայտնուած ըլլալով, Վսեմ. Սիսակ Յէրիտ պէյ ինքնուրերաբար յայտարարած է Ս. Պատրիարքին որ ինք յանձն կ'առնէ այս հատորին տպագրութեան բովանդակ ծախքը:



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎԱՐ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 30

16 ՅՈՒՆԻՍ 1907

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

[ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՋ]

Ե.

Եկեղեցականութեան խնդիրին ծնունդ տուող պատճառներէն մէկն է նաեւ առեղծքեան կիրքը, ուրիշ կը ծնին չարամտութիւնը ու չարախօսութիւնը: Ուրիշ և ի՞նչ պատճառներէ կը բղխի այդ կիրքը, այս կէտը բացատրելու համար պէտք է ամբողջ հոգեբանական ուսումնասիրութիւն մը կատարել: Միայն ըսենք, թէ այդ ատելութիւնը ընդհանրապէս գրեթէ ծնունդ կ'առնէ տգէտի մը իրապէս յարձակում կրած եսասիրութենէն, և այդ ատելութիւնը իրեն համար կ'ըլլայ անձնապաշտպանութեան ամենաքնական(?) ու օրինաւոր(?) գործիքը: Շատեր ունինք, որոնք եթէ լուրջ յարձակում մը կրելէ վերջը, ինքզինքնին ուղղութեան հրաւիրէին, աւելի երախտապարտ զգացումով մը պիտի հարկադրուէին վերաբերուիլ անոնց հանդէպ, որոնք մատերնին՝ իրենց տկար կողմերուն վրայ դրած էին: Յամառ տգիտութիւնը՝ սակայն՝ ինքնասրբագրութիւն չճանչնար բնաւ. կը մոլի, գնդակը կողին մէջ մխուած գայլի մը պէս, և անկէ ետքը իր միակ գործը կ'ըլլայ յարձակիլ՝ անուղղակի միջոցներով՝ անոնց վրայ, որոնք գնդատակ զենդած էին իր մօրթին տակ: «Կտրուած պոչ»ին ցաւը, չխաշեղող՝ կամ ուրիշ բառով արհամարհելու և ատելու շարժառիթներէն մէկն է: Այլ անկէ ետքը ո՞վ

կը խորհի թէ «արհամարհել չնշանակեր դատել», թէ «արհամարհանքը արգելք մըն է ուսումնասիրելու»։ Ատելութեան կիրքին ապաստանած, տակաւին կրնանք շատ լաւ դիտողներ ըլլալ, բայց՝ բնաւ արդար դատաւոր։ Ասկէ կը ծնի նաեւ չարամիտ չարախօսութիւնը, որ ուրիշ բան չէ, եթէ «ո՛չ գէշ խօսիլ ուրիշներուն նկատմամբ, և միայն գէշ խօսիլ»։ Չարամիտները, ատելութեան կիրքէն կուրցած, ալ ո՛ր և է ուղիղ, արդար գիծ չեն կրնար տեսնել իրենց կիրքին նշաւակը եղող՝ մէկուն դիմաւորներին և հոգեբանութեան խորը. կը մոռնան նոյն իսկ իրենց նախկին ու բնականոն վիճակի մը մէջ եղած ատեննուն տուած վկայութիւննին. չեն տեսներ ու չտեսնել կը ձեւացնեն երբեմն, իրենց ախոյեանին գործը և գործունէութիւնը և կ'ըլլան պարզապէս, մերթ կանոնաւոր և մերթ ակամայ ստախօսներ, որոնց միակ պաշտօնը կ'ըլլայ հակաակորդին վրայ վնասել՝ հեռուէն կամ մօտէն՝ անապատ նշաններ, երեւոյթներ, անոնց վրայ իրենց ատեցողի և վրէժխնդրի դձուձ չէնքը կառուցանելու համար։ «Սուտը միշտ իրը ծագում ունի տեղի կիրքեր, նախանձ, ատելութիւն, մախանք և կուսակցականութիւն։ Սուտը վտանգաւոր է միշտ, որովհետեւ անհասնելէն շատեր չարաւիժ են. գրեթէ ամէնուն մէջ նախանձի խորին յոյզ մը կայ, որ ընդունիլ կուտայ ամբաստանութիւնները, առանց զանոնք ճշմարտելու» (Ժ. Պայեո)։ «Յատկութիւնները մութի մէջ թողուլ, կը գրէ Տիւկա, մասնացոյց ընել թերութիւնները, չարամտութեան, նախանձի մասնաւոր պայծառատեսութիւնով մը, զանոնք թարգմանել գունագեղ և խայթող reliefի մը մէջ, կը նշանակէ նկարագիրներու մասին տալ իր ամբողջութեանը մէջ սխալ գաղափար մը, թէ իսկ այդ գաղափարը ճշմարտաւ ըլլայ մանրամասնութեանը մէջ»։ Եթէ այդ վրէժխնդրութեան կրակէն բռնուողները գոնէ մէկ վայրկեան անկեղծութիւնը ունենային մեզի խոստովանելու, թէ ի՞նչ կայ իրենց հոգիին խորը, բռնի ու ակամայ ստախօսութիւններու ի՞նչ այլանդակ տեսարաններու հանդիսատեսը պիտի ըլլայինք։ Այս տեսակ չարամիտները՝ ճշմարտութեան հանդէպ իրենց բռնած սուտակապաս վարմունքով պարզապէս մասնատուններ կ'ըլլան ճշմարտութեան, և բոլոր ա՛յն վսեմ սկզբունքներուն, որոնցմով պէտք է կազապարուած ըլլար զարգացումն ու քաղաքակրթութիւնը։ Ճշմարտութեան դաւաճանող ստախօսը, միեւնոյն ժամանակ կեղծաւոր մըն է *par profession*։ Կեղծաւորները, չեն կրնար կրօնքի ոգիին պաշտպան հանդիսանալ, քանի որ կեղծիքը՝ ամենամեծ կրօնքին — ճշմարտութեան և անկեղծութեան — ժխտումն է։ Բայց մի՛ գարմանաք — երբ անոնք կրօնքի անունով կը խօսին. բառեր կան, որոնց նշանակութեան առաձգականութիւնը պէտք է չահագործել. գոնէ այդ կեղծաւոր-դաւաճաններուն նշանաբանն է աստիճան ու յեղեղեղեղ բարքերու այդ ժառանգականութիւնը — կեղծաւորութիւնը — ստախօսութեան և չարամիտ քծնանքի ու ատելութեան միացած՝ կը կազմեն կրօնք մը, որուն համար ամէն չարամիտ խօսք՝

փաստ մըն է, ամէն ինքնահնար մտածում՝ վկայութիւն մը, և ամէն կարելիութիւն՝ կատարուած իրողութիւն: Հայ եկեղեցականութիւնը՝ իր տգիտութեան և դարգացումի իր անսիրելիութեան հետեւանքով դժբախտաբար իր անդամներուն հանդէպ ունեցաւ այդ չարամիտ վերաբերումը և ատով իսկ վնասեց Աւետարանի փաստին: Եկեղեցիին պատմութիւնը մէկ ծայրէն միւսը այդ չարամտութիւններուն, այդ անսիրելիութեան ու այդ ատելութիւններուն մէկ տխուր արձագանգն է եղած դժբախտաբար հինէն մինչեւ մեր օրերը:

Իբր վերջին պատճառ մատնանշենք Շահու դժացումը: — Շահու տեսակէտը ամէնէն վերջին պատճառը նկատեցինք, որովհետեւ նոյն իսկ ամէնէն շահադէտ սինլքորները շահու նպատակով ճամբայ ելլելով մէկտեղ՝ եկեղեցական խնդիրի մը կամ սկզբունքի մը պաշտպանութեան համար, միշտ ջանք մը ունին իրենց այդ նպատակը քողածածկելու, և յերկրուած սկզբունք մը, իբր իրենց ուղղութեան նշանաբանը կը ջանան ցուցնել: Մասնաշուծած թերութիւններուն մէջ ամէնէն անխոստովանելին է շահու տեսակէտը և մենք հարկադրուած ենք աւելի ընդնշմարել եզրակացութիւններու և վերլուծութիւններու խորէն՝ քան թէ տեսնել: Կեանքը շահու սկզբունք մը ունի իրեն համար. աշխատութեան օրինաւոր փոխարինութեան դրութիւնն է այդ սկզբունքը: Աշխատութեան պարկեշտ ու ազնիւ մրցակցութիւնով մը պաշտպանուած շահու տեսակէտը ո՛չ թերութիւն մըն է և ո՛չ մոլութիւն մը. ընդհակառակը ան է, որ մրցութեան հանդէսին մէջ երեւան կը բերէ անհատի մը նկարագիրին ու բնական կորովին, աշխատութեան յարմարութեան և անոր տաղանդին անհերքելի ստուգանիչը: Զեղծումի զգացումը, սակայն, շահու սկզբունքին մէջ ալ կաթեցուցած է կաթիլ մը ա՛յն թոյնէն, որ խանգարած է մարդկային ընկերական բանականութիւնը, և հիւանդագին հետեւութիւններու ծնունդ տուած: Վաստակի օրինաւոր մրցումը կը կայանայ շահաբեր գերակայութիւն մը ձեռք բերելուն մէջ, տիրանալով նորանոր շահու աղբիւրներու, առանց սակայն դուչելու կամ վնասելու ուրիշներու շահուն, այս բառին իմաստին մէջ ըմբռնելով ուրիշներու համբաւը, պատիւը, անունը եւն: Ինչպէս տեսանք, Փարսկեցիի կեանքին մէջ, եթէ մէկ կողմէն անոր դէմ հանուած հալածանքը արդիւնքն էր Եսի, սովորամոլութեան, տգիտութեան, աններող մոլեռանգութեան, միւս կողմէն շահու տեսակէտն ալ մեծ բաժին մը ունեցաւ այդ հալածանքի կարկուտներուն մէջ, քանի որ կաշառքով պաշտօն ձեռք բերելու ակնհերձ իրողութիւնը բանի չկրնար ծառայել: Եկեղեցականութեան խնդիրին ծնունդ տուող շահամոլութիւնը, կամ սպօրէն շահու սկզբունքը անհատական էր հին օրերը, և տալուին հաւաքական, սիսթեմատիք վարդապետութեան մը չէր վերածուած: Օրագրութիւնը կամ լրագրութիւնը այդ մոլութիւնը dogmatisé ըրաւ դժբախ-

տաքար: Եւ պէտք է ըսել թէ այսօր օրագրողները՝ շատ քիչ բացառութեամբ՝ կը գնահատեն կամ կ'արհամարհեն «առանց լաւ կամ վատ յատկութիւններ տեսած ըլլալու» խնդիրի նիւթ եղողին վրայ: Շահամոլութիւնը ծայրայեղ կ'ընէ մարդը, ատելութեան կամ համակրանքի մէջ, և ոսկի նժարը միայն կրնայ որոշ կերպով ցոյց տալ այդ ատելութեան կամ համակրանքին համեմատական քանակը: Քանակ (quantité) կը տեսնենք երեւոյթին մէջ, և բնաւ յատկութիւն (qualité), որովհետեւ շահու տեսակէտով ձեռք բերուած համակրանքի մը կամ նիւթուած ատելութեան մը մէջ բարոյական ո՛ր և է յատկութիւն չկրնար գոյութիւն ունենալ: Օրագրութեան մէջ տեսնուած այդ գրչական վաճառականութիւնը ու շաղկապութիւնն զբաւեց ա՛յն օրէն, երբ ասպարէզը կը մտնէի, և 904ի Մադիկին մէջ [10 դեկտ. թիւ 7] մասնաւոր յօդուածի մը նիւթ կադմելով դայն, կը գրէի ի մէջ այլոց. «Պէտք է գրականութիւնը և գրչի մարդերը վարձատրուին. ասիկա պահանջն է ամէն անոնց, որոնք կ'ըմբռնեն գրականութեան կատարած դերը և գրչի մարդերուն կոչումը: Բայց ելլել գրիչը և ինքզինքը տրամադրելի ընել յաճախորդներու առջև, ճիշդ այն մարդոց նման, որոնք տուն կամ սենեակ վարձու կուտան ուրիշներու, կը նշանակէ, թէ տակաւին չէ ըմբռնուած գրչին արժանիքը, թէ գրիչը փոխանակ իր տիրոջ հաւատարիմ և ամենալստա հելի ընկերը ըլլալու, անոր գերին եղած է պարզապէս, ուրիշներուն տրամադրելի մէկ հարձը, որ ամէնուն երեսին կը ժպտի, վճարուած դրամին համեմատութեամբ: Ու թուցիկ խօսակցութիւններու մէջ խառնուած հաճոյակատարութիւնը՝ վայրկեանական տպաւորութիւն մը միայն կ'ընէ խօսակիցներու նեղ շրջանակի մը մէջ, մինչդեռ գրական հաճոյակատարութիւնը համեմատաբար տեւական հանգամանք մը ունի, որ սխալ կ'առաջնորդէ, կը մոլորեցնէ հանրութեան դաւանանքը, և ազնութիւնն ու անկեղծութիւնը կը սպաննէ անոնց մէջ: Գրչին առաքելութիւնն ու անկեղծութիւնը կը սպաննէ անոնց մէջ: Գրչին առաքելութիւնը նուիրական է. բանով մը չկրնար փոխարինուիլ անիկա: Իր միակ փոխարինութիւնը անհատին, ուղիղ, բանաւոր, անկաշկանդ և անաչառ համոզումներուն թարգմանութեանը մէջ կը կայանայ (էջ 289-292): Այս բոլորը շատերուն կողմէն և տարրեր ձեւերու տակ ի յայտ բերուած է՝ մեր մէջ օրագրութեան սկիզբէն ի վեր [1]: Ըլլայ կուսակ-

[1] «Լրագրութեան Պրոպագանդայի յօդուածը ազոտող դրամն է, ուր նետուող իր առողջ սկզբունքները կը կորսնցնէ՝ հրաշապէս, ստանալով արժանիք ուրանալու ճկունութիւնը: Դրամը լրագրողներու մուտան է: Քանի մը զրուշի շնորհիւ, ազոտող յօդուածներ խմբագրատուններու մէջ կոկոսելով, սրբագրուելով կը հրամցուին ընթերցողին» (Ս. Մամուլ, 906, թիւ 43, էջ 1071)

«Հայ լրագրութիւնը պարզապէս խանութպանութիւն մըն է, որ ամէն տեսակ ապրանք կը ցուցադրէ, եղանակներու, ճաշակի, ճաշիկի ազդակներուն տակ. այնպէս որ այս ազդակներէն զօրաւորագոյնը, միշտ ապրանքի առատութիւն մը երեւան կը բերէ, և երբեմն անշահ հաշուեյարդարութիւններով կը սպառէ նորութենէ ինկած որ և է ապրանք կամ նորութեան տեղ բանալու և կամ զաղտնի անանկութեան մը բաժինները վճարելու համար» (Ս. Մամուլ, 1903, էջ 778)

ցական, ըլլայ անհատական շահերու սկզբունքէն պղտորուած օրագրութեան մասին հոս կ'ուղեմ առաջ բերել ժիւլ Պայեօի մէկ գեղեցիկ ու անաչառօրէն լարձրաքանդակ էջը, օրագրութեան մը մասին, որ իր ամբողջ գոյութիւնը կը պարտի ծաղրածութեան, զրպարտութեան, չափաստութեան և *chantage*ի իր ոստոստուն հանգամանքին:

«Այսօր կարգ մը թերթեր, կը գրէ Պայեօ, որոնք կ'ապրին գայթակղութիւններէ և *chantage* ներէ, անարգանքներ կը թափեն ամէնէն պարկեշտ մարդերու դէմ: Կը խեղաթիւրեն գործերը, խօսքերը, և մասնաւոր մտադրութիւնները (*intention*): Հանրութիւնը անվարժ գիտական մեթոտներու և դիւրահաւան՝ չափազանցութեան ամենախոշոր սուտերն իսկ կը կլլէ: ... Այս մամուլը ամէնէն կամակոր վարդապետութիւններն է, որ կը կիրարկէ: Փասքալ իր *XVme Provinciale*ին մէջ ցոյց կուտայ, թէ «ժողովրդներու հաստատուն վարդապետութիւնը եղած է սա թէ անարգանքը ներելի է հակառակորդներու դէմ» . 1645ին, անոնք կ'ըսէին թէ թեթեւ յանցանք մըն է անարգել, սուտ կամ շինծու ոճիւրներ վերագրել վարկաբեկելու համար զանոնք, որոնք գէշ կը խօսին մեր նկատմամբ: Անոնք խղճի հանգարտութեամբ անարգողներ են: *XVIme Provinciale*ին մէջ կուտայ ահաւոր օրինակը անոնց յանդգնութեանը և անարժան մամուլին, անոնց ուսուցումին. արժան է որ պատշաճեցնենք Փասքալի նման մեծ պօրկեշտ քրիստոնեային սա սոսկալի բառերը. «Ճշմարտութիւնը հակառակ ըլլալով Ձեր նպատակներուն, ստիպուած էք սուտին վստահելու»: ... Ով որ կը շարունակէ գնել թերթ մը, որ յաճախ *en flagrant délit* անարգանքի (*calomnie*) մէջ բռնուած է, կա'մ խենթ մըն է, և կամ մեղսակից մը (*complice*)»: Պայեօի գրածներուն թուաբանական ճշմարտութեանը համոզուելու համար, բաւական է միայն շարաթ մը ուշադիր ըլլալ թերթերու պարունակութեանը, հոն տեսնելու համար թէ ինչպէ՞ս կը պաշտպանուին անոնք, որոնք իրենց պաշտօնավարութեան միջոցին որ և է իրական գործ ու գործունէութիւն չունենալով մէկտեղ, իբր արար գործիչներ ներբողուած են դեռ իսկ իրենց պաշտօնատեղիի ճամբուն վրայ: Եւ եթէ երբեք օրագրութիւնը յաճախ առևտուրի մը հետեւանքով սքանչացում կը յայտնէ անհատի մը հանդէպ, որուն վրայ անաչառօրէն դիտուած ատեն հիացումի բան մը պիտի չկրնայինք գտնել, մենք չենք զարմանար այդ երեւոյթին վրայ, քանի որ Սթանտալի բացատրութեամբ *toute admiration est un certificat de ressemblance* . Եւ Հայ եկեղեցականութիւնը, իր կողմէն շահագործեց օրագրութեան այդ *slyar* կողմը, ինքն ալ փոխադարձաբար շահագործուելու վիճակին մէջ ինկած: Ով շահեցաւ այդ փոխադարձ ու կրկնակի շահագործումէն. չենք գիտեր, որովհետեւ անձնապէս չենք մասնակցած այդ առևտուրին (և ասի բաց ճակատով կրնամ յայտարարել). միայն սա գիտեմ, որ ատկէ սուսօղորդ եղած է Կրօնքը, եկեղեցին և անոնց աւանդապահը եղող Հանրութիւնը, որուն վստահութիւնը և դրամը կը գործածուի՝ այսպէս սով՝ միայն զինքը խաբելու համար:

ՄԱՌՇԵՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳՐԻԳՈՐ ՊԱՏՈՒԵԼԻ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ

—○○○○—

[ԿԵԱՆՔԻ ԵՒ ԴՈՐԾԸ]

Զ.

ԺԶ. Դարուն՝ կարեւոր դէմք մըն է Յովհաննէս Վ. (Բրգութ) Ոստանցի. ասոր աշակերտներուն մէջ յիշատակութեան արժանի են Սիմէոն Վ. Ապարանցի (Ա.), որ իբր տաջնորդ և վարժապետ ծաղկեցուց Ապարանիկ վանքը (Բիզանդիոն, թիւ 2383) և մանաւանդ Բարսեղ Գաւառցի Ռաբունապետը, որ բարեկարգեց (1589) Ամրտօլու վանքը: Բարսեղ գաւառացին էր. որ առաջին անգամ մոցուց ուսումնարանը ցանկին մէջ արտաքին գիտութիւններ. ան երկար տարիներ ինքզինքը նուիրեց՝ անձանձիր աշխատութեամբ՝ նախնեաց ձեռքով կատարուած գրական աշխատասիրութեանց ուսումնասիրութեան, օրինակի համար վերծանեց «Սահմանաց Դիրքը», «Պորփիր»ը, ջանաց հասնալ սեռ, ճեպակ, ճարտարութիւն, յասուկ, պատահումն, ստորաստութիւն, քացառութիւն և այլն բառերը, որոնց կը պատահէր նախնի վարդապետներու գիրքերուն, Գանձուց Դիրք և այլն մէջ: Ինչ որ սորվեցաւ ինքնաշխատ տընութեամբ՝ սորվեցուց իր սաներուն. մահուան վայրկեանին՝ անոնց կտակեց անձանձիր ուսումնասիրութիւն: Իր աշակերտներէն Ներսէս Վ. Մոկացի, քեղջու (=մեծ պեխ ունեցող) կոչուած, հետեւեցաւ իր վարժապետին գեղեցիկ օրինակին և ա՛լ աւելի ձօնացուց իր հմտութիւնը. ինքն ալ՝ իր կարգին՝ աշակերտներ ունեցաւ նախ՝ Մեծ Անապատին և յետոյ Լիմ կղզիին մէջ, ուր գասախօսեց. «Հոլով աշխատեցաւ և առաւելացոյց քան զԲարսեղ Վ.» (Ա. Դաւրիժեցի). մեռաւ 1623ին: Իր ամէնէն յաջողակ աշակերտը եղաւ Մելքիսէթեկ Լժանցի (Երեւանցի) որ երկար տարիներ աշխատեցաւ Դաւիթ Սնյաղթի երկասիրութեանց վրայ և «գրեթէ ինքնագիրտ եղել փիլիսոփայական գիտութեանց»^[1] (Ա. Դաւրիժեցի) և սորվեցաւ այլեւայլ աղբերու տումարական արուեստին «մակացութիւնը» (=գիտութիւն): Այս միջոցին Հայոց կաթողիկոսն էր սրբակեաց և կրթատէր եկեղեցական մը, Մովսէս Միւնեցի, աշակերտ Սրապեանի^[2] և Կեսարացի Գրիգոր վարդապետին^[3]: Դպրատուն մը հաստատեց Յոհանավանքին մէջ, Երեւանի մօտ: Մելքիսէթ Լժանցի լսելով որ կաթողիկոսը մեծ

[1] Սահմանց, Պորփիր, Ստորգութիւն, Առաքինութիւն, Վերլուծական, Ամենայն Ազգաց Տօմարն, Դիտութիւն Գերախանութեան, «Գտնողն նմանայ բուրբանակներն»:

[2] Յետոյ Կաթողիկոս, Գրիգոր ԺԳ. ամուսնով, առակերտած էր Կեղեցի Ղուկաս մեծ վարդապետին:

[3] Յետոյ Պատրիարք ալ եղաւ:

ղարկ՝ տալ կ'ուզէ կրթական գործին, կը դիմէ անոր և կը սկսի ուսուցանել Յոհանավանքին մէջ մեծ խանդով և գնահատելի արդիւնաւորութեամբ. յետոյ կը փոխադրուի իւր ուսուցիչ Էջմիածին. իր տեղափոխութեան պարագաները շատ զարմանալի և հետաքրքրաշարժ են: Մովսէս Կաթողիկոս՝ Ձուղայեցիներուն առաջնորդ կարգած էր Կեսարացի Խաչատուր վարդապետը. ան ունեցաւ քանի մը աշակերտներ՝ որոնց մէջ կ'արժէ յիշել Սիմէոն Ձուղայեցի և ասոր կրտսեր աշակերտակիցը, Ոսկան վարդապետը: Կաթողիկոսը՝ Խաչատուր վարդապետը իր աշակերտին հետ իրր պատուիրակ Լեհաստանի Իլով քաղաքը կը զրկէ, ուր Հայ պատուիրակութիւնը վիճաբանութեան կը բռնուի տեղին Լատին կրօնաւորներուն հետ և անկարող կ'ըլլայ պատասխանել անոնց սա պարզ հարցումին թէ՛ վարեմ բառը բա՞յ է թէ անուն: Արդար ըլլալու համար պէտք է ըսել թէ՛ Սիմէոն Ձուղայեցին բաւական հմուտ մէկն էր. իր նշանակելի տգիտութիւնը Արսաֆին Գիսուքեանց, մասնաւորաբար Քերակաւոքեան մէջ էր. կը ճանչնայ իր տգիտութիւնը և երբ կը դառնայ, կ'աշխատի իր կրթութեան թերին լրացնել, ուսանելով Մելքիսէթի քով՝ որուն հմտութեան, մանաւանդ Արտաքին Գիտութեանց համբաւը տարածուած էր. ահա այս առիթով էր որ Մելքիսէթ կը փոխադրուի Էջմիածին, ուր կը դասախօսէր Դաւիթ Անյաղթի թարգմանութիւնները, «Ստորագութիւն»ը, «Աշխարհ»ը և այլն, ընդհանուր տոմարագիտութիւն և քերականութիւն: Մելքիսէթ իր արդիւնաշատ կեանքը կը կնքէ Երեւան, Անանիա առաքեալին վանքին մէջ 1632ին:

Փիլիպպոս Կաթողիկոս յաջորդելով Մովսէս Կաթողիկոսի (+1633) կը շարունակէ իր հոգեւոր ծնողին կրթասէր ուղղութիւնը: Իր անմիջական հովանաւորութեան տակ առնել փափաքելով կրթական գործը, Էջմիածին կը փոխադրէ Յոհանավանքին Դպրատունը: Կաթողիկոսին հրաւերով Ոսկան վարդապետ ուսուցիչ կը կարգուի. Պօղոս Սեղեմեացի Լատին կրօնաւորը՝ որ արդէն Կաթողիկոսին թոյլտուութեամբ Անանիա առաքեալին վանքին մէջ մէկուկէս տարի պատանիներու տրամաբանութիւն և ուրիշ գիտութիւններ կը սորվեցնէր (1634), այս միջոցին Էջմիածին փոխադրուած կը սատարէր Դպրատան յառաջդիմութեան: Յետոյ Սիմէոն Ձուղայեցին ալ մասնաւոր հրաւերով դասատու կը կարգուի (1640), մասնաւորապէս քերականութիւն դասախօսելու: Այս ժամանակները Ստեփաննոս Լիտացի Էջմիածին կուգայ գլխաւորաբար Հայ դպրութեան մէջ զարգանալու համար, բայց միեւնոյն ատեն կրթութեան գործին՝ իր մասնակցութեան ոչ-արհամարհելի բաժինը կը բերէ, Լատին լեզուի և ուրիշ կարեւոր ուսումներու հմտութեամբը: Էջմիածնի այս Դպրատունը յիշուած նպաստաւոր պայմաններուն տակ փառաւոր չրջան մը կ'ունենայ. հոն կ'աւանդուի բարձրագոյն ուսումներու ծրագիր մը՝ կարող դասախօսներու կողմէ:

Կ. Պոլիս շատ կանուխ հաղորդակից կ'ըլլայ գրական այս շարժումին և զարգացումին: Կը պատմուի թէ՛ նոյն իսկ Պօղոս Աեղեքնացի Լատին կրօնաւորը՝ զոր յիշեցի անգամ մը, 1637ին կ'աշխատի Կ. Պոլսոյ Հայոց մէջ և Ղալաթիա, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ իսկ Հայ սքեմով կը քարոզէ: Դարձեալ՝ Կղեմէս Դալուհոս Լատին կրօնաւորը Հայ պատանիներու ուսուցիչ կ'ըլլայ (1641) նախ՝ Ղալաթիոյ և յետոյ՝ նոյն իսկ Պատրիարքին բնակարանին մէջ: Այսպէս զանազան ժամանակներու մէջ բազմաթիւ անձեր՝ որոնք Լյժմիածնէն Կ. Պոլիս կուգային, կը պահեն անընդհատ՝ մտաւորական հաղորդակցութիւնը երկու կրթական միջավայրերուն մէջ: Ուստի զարմանալի չէ որ Լյժմիածնի և Կ. Պոլսոյ դպրոցներուն մէջ աւանդուած ուսումներու ծրագիրը միեւնոյնն էր հաւանօրէն, շատ աննշան փոփոխութեամբ, նկատի առնելով տեղական պահանջները:

Երբ քննութեան կ'առնենք այդ ժամանակի ուսումներու ծրագիրը, կը տեսնենք որ ան յարնեմանն է Միջին Դարու Եւրոպիոյ ծրագրին՝ որ կը պարունակէր եօթը ազատական արուեստներ (septus artes liberales), երկու մասերու բաժնուած. առաջինը (Երրեակը=Trivium) կը պարունակէր Քերականութիւն, Ճարտասանութիւն և Տրամաբանութիւն. երկրորդը՝ (Քառեակը=Quadrivium) Թուաբանութիւն, Աստղաբանութիւն, Երաժշտութիւն և Երկրաչափութիւն: Արդ՝ խնդիր է թէ Լյժմիածնի մէջ մշակուած ուսումներու ծրագիրը վերաբարձրեալն էր թարգմանիչներու Դարուն, մասնաւորաբար Սիւնեաց Դպրոցին մտաւորական կեանքին, թէ Միջին Դարու Եւրոպիոյ գրական ուղղութիւնն էր Հայոց մէջ մտցուած:

Ընդհանրական (Encyclical) գաստիարակութեան Երրեակ և Քառեակ ուսումներուն ծրագրին ծագումը շատ հին է: Զեռնահասներու^[1] կարծիքով. անոր որրանը Աղեքսանդրիա եղած է. յետոյ ընդունուած և ընդհանրացած Յունաստան և Հռոմ և տեւած մինչև Միջին Դարու վերջերը: Եւ դարուս մէջ կատարուած աշխատասիրութիւններէն կարելի է բանաւորապէս հետեցնել թէ՛ այդ միեւնոյն ծրագիրը մշակուած է մասնաւորապէս Սիւնեաց Դպրոցին մէջ. թարգմանիչները հրահանգուած են այդ ծրագիրով ոչ միայն Բիւզանդիոնի, Աթէնքի, այլնաև Աղեքսանդրիոյ մէջ «ի ստոյգ յօդանալ ճեմարանին» (Վերաբանութեան...): Այդ ժամանակի երկասիրութիւններէն յիշենք անցողակի.

Պիտոյից Դիոքը, որ ճարտասանութեան զասագիրք մըն էր՝ Դաւիթ Անյաղթի երկերը և թարգմանութիւնները՝ որոնք կ'ընդգրկէին Խմաստաւիրութեան զանազան մասերը: Դիոնեսիոս Թրակացիին Քերականութեան

[1] «Մանկավարժական Դասախօսութիւններ» (Տօթ. ճ. Ուօսպրեմի) էջ 51:

Թարգմանութիւնը, դարձեալ Դաւիթ Անյաղթ փրկիտփային ձեռքով կատարուած էլն. ևլն: Առաքել պատմադիրը՝ Ժ. Գարուն վերջերը Ամբուսու վանքին մէջ տեսնուած մտաւորական արթնութիւնը և դարգացումը կը թուի վերագրել Սիւնեաց Դպրոցին, հաստատելով երկուքին մէջ աշակերտի և ուսուցիչի սերտ յարաբերութիւնը: Եթէ մէկ կողմէ կը միտինք ակնարկուած ուսումներու ծրագրին կարծուածէն աւելի մեծ հնութիւն տալ, միւս կողմէ չենք կրնար ժխտել շատ կանուխ Ունիթորներուն աղղեցութիւնը (Ժ. Ա. Դարէն սկսեալ) և աւելի ուշ (Ժ. Գարուն) քանի մը Լատին կրօնաւորներու գրական գործունէութիւնը^[1]: Յիշենք այս տեղ անցողտկի մեր գրասէր նախնիքներուն լայնախոհութիւնը՝ որով անոնք չեն խրաչած բնաւ օտարներէն և անոնցմէ քաղած են՝ իբր անյադ մեղուններ՝ հիւթ իրենց մտաւոր զարգացումին համար: Փակենք այս խնդիրը լայնախոհ ուղղութեան ջատագովներէն մէկուն — Երուսաղէմի միաբան Հաննա վարդապետի — սա խօսքերով. «Ասէն ոմանք ի մերայնոց թէ՛ ի մէջ գրեանց Լատինականաց դտանին գրեցեալ բանք ոմանք զորս ոչ ընդունիմք մեք Հայքս. ո՞չ ապաքէն զբազում անասելի հերձուածս գտանեմք ի գրեանս Արիստոտէլի և Պորփիրիի (որ նախապէս էր քրիստոնեայ և յետոյ ոչ), մի՛ հայիր թէ յումմէ՛ կամ յորո՞ց իցէ շարադրեցեալն, այլ նկատեալ թէ զի՞նչ իցէ շարադրեցեալն» (էջ 158): Բայց այս երկար այլ թերեւս ոչ-անկարեւոր չեղումէն վերջը, դառնանք բուն իսկ մեր նիւթին, խօսելով այն սխրալի գործին, արդիւնքին վրայ՝ որ կատարուած է Գում-Դափուի Ուսումնարան-Ընծայարանին մէջ և միջոցով:

Գրիգոր Պատուելի Փէշտիմալձեան նոյն իսկ օտարներու վկայութեամբ (Anderson's Oriental Churches P. 92) սովորական մարդ մը չէր, այլ հետաքնին և ճշմարտասէր միտք մը, խորին հմտութեան տէր, բայց ամէնէն աւելի հիանալի նկարագիր մը, խոնարհ, հեղահամբոյր և ճշմարտապէս քրիստոնեայ անձ մը (Տես Anderson's Oriental Churches). եւանդուն ուսանող մըն էր Ս. Գրքին. ամէն օր կէս օրէ հտըը Աստուածաշունչի դաս մը կուտար Ծննդոց Գրքէն սկսելով (տես Բիւրակնի 1890, 1891, 1892 Տարիները). իր կեանքը համաձայն էր սորվեցուցածին. ուրիշ բառով ճշմարտապէս հաւատացող մըն էր դասախօսած վարդապետութեանց. իր ապրած քրիստոնէական կեանքը, համոզկեր չեղտը իր դասախօսութեան, իր խորին հմտութիւնը որով կը պարզաբանէր իր դասերը, աղղու տպաւորութիւն մը կը գործէին իր սաներուն միաբին և սիրտին վրայ միանգամայն. ան ճշմարիտ յեղաշրջում մը առաջ բերած

[1] Պօղոս Սեդեմազի Լաւին կրօնաւոր քարգմանած էր Էջմիածնի մէջ Էլէմէնթում (=Տարեբ) Լոնիգային. եւ լեզուագէտ Ղուկաս վարդապետ քարգմանած էր Յովն. Կոլոսի դպրոցին մէջ իմաստաիրութեան զանազան մասերը եւայլն:

է անոնց ներքին կեանքին մէջ, հոգեւոր արթնութիւն մը: Եկեղեցիին մասին ունէր ինքնայատուկ համոզումներ՝ որոնք կը տարբերէին ընդունուած և հաստատուած կարգէն. իր դաւանանքն էր որ եկեղեցին իր կազմակերպութեաւ և վարդապետութեամբ պէտք էր որ կենդանի, հոգեւոր, վերանորոգող ուժ մը ներկայացնէր. այս մասին անհրաժեշտ կը նկատէր բարեկարգել զայն, մերժելով ինչ որ յետսամուտ էր և արագելք՝ հոգեւոր արթնութեան և զարգացման: Այս ոգիով հրահանգուած են, այս ոգիով տոգորուած են Ընծայարանին սաները:

1833ին, կիրակի առտու մը, Գում-Գափուի Մայր-Եկեղեցին գեղեցիկ տեսարան մը կը պարզէր: Ընծայացուներ, թիւով 15, քահանայ կը ձեռնադրուէին. ժողովուրդին ցնծութիւնը չափ ու սահման չունէր. մասնաւոր հրաւերով ներկայ էին այս ձեռնադրութեան հանդէսին՝ Թուրքիոյ առաջին Ամերիկացի Միսիոնարները, Տօքթ. Կուտէլ և Տօքթ. Տուայթ, որոնք նոյն իսկ հրաւիրուած էին՝ քրիստոնէական անխորական ոգիով՝ մասնակցել ձեռնադրութեան: Ընծայարանի առաջին հունձքն էր աս, որ անհունապէս կը հրճուեցնէր հիմնադիրները, որոնք կը տեսնէին իրենց ջանքերուն կատարեալ պսակումը և ժողովուրդը՝ որ կ'ունենար վերջապէս հոգեւոր և ուսեալ քահանաներ: Ասոնցմէ մէկն էր Տ. Գէորգ Արծրունի պատուական քահանան՝ որ խոր ծերութեան մէջ իսկ չղաղբեցաւ օր մը քարոզելէ Աստուծոյ խօսքը: Հետաքրքրական է յիշել հոս թէ՛ Հայ Աւետարանականներու կրօն. շարժումին առաջին յարողները եղան Փէշտիմալձեանի աշակերտները՝ Վ. Սարգիս վարժապետ Յովհաննէսեանը, որ Զմիւռնիա չորս տարի «Շտեմարան Պիտանի Գիտելեաց» ամսօրեայ հանդէսին թարգմանութեամբ զբաղեցաւ, Աբիսողոմ Իւթիւձեան, որ առաջին քարոզիչը եղաւ Հայ-Աւետարանական առաջին եկեղեցիին (1846), Յովհ. Տ. Սահակեան, Սինեքերիմ Տ. Մինասեան, Մկրտիչ Գիրէձեան, ևն.:

Գրիգոր Պատուելի Փէշտիմալձեանի աշխատութեանց միջոցով առաջ եկած այս փոփոխութիւնը կրօնական ըմբռնումներու և կեանքի մէջ՝ կատարուեցաւ առանց արտաքին կամ օտար ազդեցութեան: Միսիոնարական աշխատութիւնները սկսած են մեր մէջ 1831էն ետքը: Հայ Եկեղեցիին բարձրագոյն շրջանակներու՝ Միսիոնարներու հետ յարաբերութիւնը նախապէս չատ բարեկամական եղած է: Կարապետ Պատրիարք շատ սիրալիկ ընդունելութիւն մը կ'ընէ Տօքթ. Կուտէլի, երբ ան առաջին անգամ կ'այցելէ (1831) և դարձեալ, ինչպէս անգամ մը յիշուեցաւ, երկու տարի ետքը (1833), առաջին երկու Միսիոնարներն ալ կը հրաւիրուին ոչ միայն ներկայ ըլլալու, այլ մասնակցելու ձեռնադրութեամբ՝ ընծայացուներուն քահանայութեան հանդէսին:

[Յաջորդով]

ՄԻՆԱՍ ՄԱԼԵԱՆ

“ԽԱՐՈՒԱԾ ԱՂՋԻԿԸ,”

Թուրքնի Ռօշ դղեակին մէջ, արձակուրդի վերջերն է: Դղեակին տիրող մէկ հատիկ աղջիկը, տասնըվեց տարեկան, նրբահասակ, խոշոր անմեղ աչքերով աղջիկ մը, Օր. Ժիւլի Լէգուրթուա, իր սենեակին մէջ է: Օր. Ժիւլի փոխանակ սանկ խեղօքիկ մը իր անկողինին մէջ պառկելու, իր ներքնաշապիկին վրայէն պարեգօտ մը կանցընէ, որ խիստ անզաղտնապահ է Ժիւլիին մէկէ աւելի չցուցադրուելիք մասերուն նկատմամբ, և կը մօտենայ այն դուռին՝ որ զինքը հաղորդակցութեան մէջ կը դնէ քովի սենեակին հետ: Կը ձայնէ.

— Ժա'նն, կուգաս կոր:

— Այո՛ աղուորս:

Ու քիչ մը ետքը, իրեն տարեկից ու մութ գոյն չըջաղդեստով Օրիորդ մը կը մանէ Ժիւլիին սենեակը: Ժա'նն Էմըրի, գէր, խարտեաչ աղջիկ մըն է, և Ժիւլիին՝ Հօշ ծառուղիի գիշերօթիկ վարժարանի ընկերունին ու իր անբաժան բարեկամունին, նոյն իսկ արձակուրդի ատեն: Երկուքը մէկէն սանկ խորհրդաւոր և ծանրախոհ լըջութեամբ կ'անցնին սենեակին մէջտեղը դրուած դրասեղանին առջև:

Օր. Տը Լէգուրթուա ձեռագիր տետրակ մը կը-թանայ, որուն կողքին վրայ ճերմակ թուղթ մը անցուած է: Առաջին էջին վրայ գրուած են սա բառերը.

«ԽԱՐՈՒԱԾ ԱՂՋԻԿԸ»

ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ ՄԵԾ ՎԷՊ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆԿԷՐՍՆ ՏԸ ԳԱՍԹԷԼԺԱՒՈՒ

Օր. Լէքուրթուա մէկ երկուք մը կը թղթատէ: Իր բարեկամունին հիացումով կը դիտէ: Մինակ իր այս հաւատարիմ բարեկամունին է որ գիտէ մեծ գաղանիքը: Անկէբան տը Քասթէլժալու՝ խարտեաչ, ետին՝ ձգած մաշեր ունի, նորաբոյս դնդիկներ կուրծքին վրայ: «Խաբուած Աղջիկը»-ին հեղինակը նոյնինքն Ժիւլին է, և այս սիրահարական մեծ վէպը որուն 103րդ էջը արդէն ողջունուած է, արձակուրդի օրերու խորհրդաւոր պտուղն է: Ժիւլի, ամէն ցօրեկէ վերջը նամակ գրելու և կամ պարտականութիւններու վրայէն կրկին անցնելու պատրուակին տակ, իր սենեակը կը քաշուի, և քանի մը քառորդ ժամեր կ'անցընէ գլուխ գլխի իր թանկագին տետրակին հետ. իրիկուան՝ երբ դղեակին մէջ ամէն մարդ կը քնանայ և ամէն դուռ գոցուած է, օրուան մէջ չարադրած խմբագրած էջերը իր Էմըրի բարեկամունին կը կարդայ: Ժա'նն կը հարցնէ: — Գլխաւոր մասը լմնցուցիր:

— Հապա՛...

— Մինչև այն տեղ ո՛ւր...

— Այո՛, մտիկ ըրէ՛...

Երկուքը մէկ կը նստին:

Ժիւլի.— (Թեթեւ մը կը հազայ և կը սկսի կարգալ)... Զօրավար Մաքսիմ չէր սիրաւած: Այն տպաւորութիւնը որ Մաքսիմ առաջ բերած էր Մարկրիթի վրէ...

Ժանն.— (Ընդմիջելով)... զոր առաջ բերած էր Մարկրիթի վրայ:

Ժիւլի.— Հա՛... այո՛, այո՛, զոր Մաքսիմ առաջ բերած էր Մարկրիթի վրայ՝ սարսաղազեցիկ հանգամանք մը ունէր: Ան տեսնաւուն...

Ժանն.— Զա՛յն... զա՛յն տեսնաւուն:

Ժիւլի.— (Նեղսրտած) Ա՛, ինձի նայէ՛, անանկ ամէն ատեն զիս մի ընդմիջեր, չէ նէ չեմ կարդար բնաւ, ջիղերս ոտք կը հանես կոր, քերականութեան սխալ բռնել ուղեկներովդ:

Ժանն.— (Վախնալով). Աղէ՛կ... աղէ՛կ սակայն, ատա՛նկ սխալներ չես կրնար թողուլ:

Ժիւլի.— Սխա՛լ... է՛ն առաջ ասոնք սխալ չեն: Ասոնք տպաւորանին մէջ կը սրբադրուին: Եւ յետոյ ամէն գիրքի մէջ ալ կայ... բանին մէջ... (Կը մտածէ) Պուալօին մէջ, Զէնաիտ Ֆլէօրիօին մէջ, ամէն տեղ, ամէն...

Ժանն.— Անա՛նկ է ա՛... չարունակէ:

Ժիւլի.— (Կարգալով)... Զինքը տեսնաւուն պէս Մարկրիթ սիրած էր Մաքսիմը: Մարկրիթ իր մօրը քով վազեց անսկարագրելի վիճակի մը մէջ: «Ինչ գեղեցիկ է, կը մտածէր, համազգեստը ինչ ալ անդուոր վայլած է իրեն, ինչ աղուոր ձեռքեր ու ինչ հիւսնալի պեխեր՝ որոնք խորխորաբար վեր դարձուած են. քաջութիւնը հրաշէկ բաւերով կը կարդացուի կոր իր դժնէ դէմքին վրայ»:

Ժանն.— Դժնէ՛. դժնէ ի՛նչ ըսել է որ...

Ժիւլի.— Ա՛... չգիտնայի՛ր. չե՞ս գիտեր ի՛նչ ըսել է դժնէ դէմք ունենալ. խիստ կծու գիմագիծեր ունենալ ըսել է:

Ժանն.— (Համոզուելով)... Ա՛հ, դժնէ՛, դժնէ՛:

Ժիւլի.— Մարկրիթ այս մտածումներէն վրդուլուած նետուեցաւ իր խաչելութեան պատկերին առջեւ և ուխտեց որ զօրավարին հետ ամուսնանայ. հակառակ պարագային, ինքզինքը կարող կը դգայ, այո՛, կարո՛ղ կը դգայ ամէնէն մեծ յիմարութիւնները ընելու, օրինակի համար, ինքզինքը առեւանգել տալու... (Ժանին դառնալով). Ի՛նչ պէս, աղէկ ըսե՛ր եմ:

Ժանն.— Սոսկալի՛ է, աս անանկ վէպ մըն է զոր ամէն ձեռքի մէջ կարելի չէ դնել:

Ժիւլի.— (Հպարտութեամբ) Ա՛... դուն ալ ամմա՛ ըրիր. (Կը կարգայ). Դիշեր էր. Լուարէի հովիտը ծածկուած էր գիւղերին մթաստուեր

քողերով. երկինքին վրայ ո՛չ մէկ լուսաւոր չէր փայլեր: Ձիւնը, ձերմակ սաւանի մը պէս սփռուած էր: Մարկրիթ իր սենեակէն դուրս ելաւ: Տանլօ նրբանցքներէն ներս հովը խժալուր ձայնով մը կ'աղմկէր...

Ժանն.— (Տգգունած) Ժիւլի, կը վախնամ կոր. ինչո՞ւ ատանկ սարսուռ ազդող բաներ կը գրես. դիտմամբ կ'ընես որ վախնամ...

[Եւ իր աթոռը Ժիւլիին կը մօտեցնէ]:

Ժիւլի.— (Շարունակելով)... Հովը խժալուր ձայնով մը կ'աղմկէր: Մարկրիթ ինչո՞ւ համար ասանկ ցուրտ օդի մը սենեակէն դուրս ելլելու ստիպուած կը զգար ինքզինքը: Որովհետեւ խորհրդաւոր ուժ մը զինքը հո՛ն կը մղէր...: Զօրավար Մաքսիմ ի՞նչ կ'ընէր...

Ժանն.— (Զայնը յուզումէն այլալլած) Հո՛ն է:

Ժիւլի.— Ո՞ւր հոն...

Ժանն.— Տանը պարտէզին մէջ... Աստուած վկայ որ հոն է. ո՛ն, չուտ րրէ. Աստուած իմ աս ի՞նչ հիանալի է...

Ժիւլի.— (Կարգաւով) Զօրավարը, ինքն ալ, խորհրդաւոր ուժէ մը մղուած էր դէպի Մարկրիթը, որուն վրայ առաջ բերած էր այն տեսակ տպաւորութիւն մը, զոր... (Կը վարանի. յետոյ հաստատամտաբար)... որ աներեւակայելի էր: Գիշերուան ժամը 11ին, ձին համեռոց, և սրընթաց հասաւ դղեակ: Պարտէզին դուռը գոց գտաւ:

Ժանն.— Է՛յ հիմա՞ ինչ պիտի ընէ:

Ժիւլի.— (Վերսկսելով) Մաքսիմ ձիէն կ'իջնայ և իր ատրճանակին բունովը պահապանին դուռին կը զարնէ. պահապանը սարսափահար դուռը կը բանայ: — «Մտիկ ըրէ, կ'ըսէ զօրավարը, բա՛ռ մը եթէ արտասանես, զլուխդ կը ջախջախեմ. իսկ եթէ թոյլ տաս որ անցնիմ, քեզի հարիւր հազար Ֆրանք կայ»:

Ժանն.— Ը՛... դուն ալ երեք հարիւր պէտք էիր ըսել:

Ժիւլի.— Ինչո՞ւ:

Ժանն.— Հարիւր հազար... երեք հազար Ֆրանք եկամուտ ըսել է... մինչդեռ մարդը իր տեղէն պիտի ըլլայ:

Ժիւլի.— (Ուղղելով) Քեզի երեք հարիւր հազար Ֆրանք կայ: Պահապանը կ'ընդունի: Զօրավարը ձին կը նստի ու պարտէզ կը մտնայ: Մարկրիթի սենեակին պատուհաններէն դուրս ճառագայթող լոյսը զինքը կ'առաջնորդէր... (Ժանին) Առաջուց քեզի կ'ըսեմ կոր, ասոր յաջորդող մասը սոսկալի պիտի ըլլայ. աղէ՛կ հետեւէ. բոլորովին իմ գլխուս և իրապաշտ ոգիս ցոյց տուող մասը կը կազմէ, Ժօրժ Սանէն ալ աւելի իրապաշտ:

Ժանն.— Օ՛ն, տեսնենք:

Ժիւլի.— (Կարգաւով) Մարկրիթ որ վանդակորմին կրթնած էր, որ

Լուարէի վրայ կը նայէր, յանկարծ լսեց ձիուն դոփիւնը, որ կ'արձագանգէր ծովուն...

Ժանն. — Պէտք է գիտնաս որ Լուարէ ծով մը չէ, գետ մըն է։ Բայց հոգ չէ, շարունակէ՛։

Ժիւլի. — (Կարդալով) Մարկրիթն է... Դոչեց Մաքսիմ. Մարկրիթ ճանչցած էր գիշերին մթութեան մէջէն Մաքսիմը։ Վայրկեան մը ետքը Մարկրիթ Մաքսիմի բազուկներուն մէջն էր։

Ժանն. — (Վախնալով) Էյ ձիւն, ձիւն ի՞նչ ըրաւ։

Ժիւլի. — Կեցի՛ր. (կը շարունակէ) Մաքսիմ իր ձին Լուարէի վրայ նայող terrasseին երկայնքը կապեց... անանկ որ, ասպանդակներուն վրայ կոխելով, ճիւղ. վանդակորմին կը հասնէր՝ ուրկէ կընար սիրատու չոր համբոյրներ զետեղել Մարկրիթի հրավառ այտերուն վրայ։ (Ժան չնչանատ մտիկ կ'ընէ։ Ժիւլի կը շարունակէ)։ Մարկրիթ իր մերկ ձիւնապիտակ թեւերովը վայն կը գրկէր և իր երկայն մազերովը կը ծածկէր Մաքսիմին գլուխը։ Իր խոշոր կապոյտ աչքերը կը մատնէին անանկ արբույիչ հիւծում մը՝ որ գիտէ կամքին ուժը խորտակել, մտքին փափկանկատութիւնը ոչնչացնել։ Զօրավար Մաքսիմ իր շրթունքները միեւնոյն բաժակին մէջ թաթխեց...

Ժանն. — (Խորամանկ մոտածումով մը) Է՛, աս քովեղ է։

Ժիւլի. — (Դող ելած) Բնականաբար. ի՞նչ կայ որ...

Ժանն. — Որովհետեւ... ես կը յիշեմ կոր... Կարգացած ըլլալ տեղ մը ադ, հա՛ միտքս եկաւ, սա ուր է անցեալ տարի արձակուրդին, գիտե՞ս, մեր տունը, մասենադարանէս կարմիր գիրք մը առիր. անոր մէջէն կը կարծեմ կոր որ եղած ըլլայ։

Ժիւլի. — Ես քեզմէ րա՛ն չեմ պահեր աղուորս. միշտ մէկ նախադասութիւն մը կայ զոր ընդօրինակած եմ ա՛դ գիրքէն... Էնճիանաէն ըսել կ'ուզես. այն մասը ուր Ռէյմոն խափշիկուհին կը համբուրէ. միշտ միտքս եմ։ Էնճիանաի մէջ «Իր մերկ թուխ թեւերը» և «Իր խոշոր սև աչքերը» ըսուած է... Եւ յետոյ պարագաները այնչա՛փ կը տարբերին որ. Ռէյմոնը և խափշիկուհին Տիկ. Տէլմասի սենեակին մէջն են, մինչդեռ իմ վէպիս մէջ մէկը ձիու վրայ միւսը քերպան է. ասիկա նո՛ր պարագայ մըն է։

Ժանն. — (Համոզուած) Անանկ է ա՛... Ադ մասը լմնցա՛ւ։

Ժիւլի. — Բնականաբար ո՛չ. վե՛րջը շատ աղուոր է։

Ժանն. — Շուտ ըրէ, վերջը կարգայ։

Ժիւլի. — (Շարունակելով) Հովը կատաղօքէն կը սուլէր պարտէզին ծառերուն մէջէն և կ'ալեծփէր Լուարէն, որ քերպանին ստորոտէն կը հոռէր։ Յանկարծ մօտակայ զանգակատունը երկու. զարկաւ. «Ժամը երկուքն է, ըսաւ Մարկրիթ, պէտք է որ սենեակս քաշուիւմ. — Մնաս բարով, սիրելիս, ըսաւ Մաքսիմ, երբեք չպիտի մոռնամ այն հեշտալի ժամերը զորս

մօտդ անցնենու բարեբախտութիւնը ունիմ: Մնաս բարով, կամ աւելի ճիշդը, ցտեսութիւն»: Եւ վերջին անգամ ըլլալով ասպանդակներուն վրայ կոխեց և անոր չրթունքներուն վրայ հրավառ համբոյր մը դրոշմեց:

Ժանն. — (Գայթակղած) Օ՜ օ՜ օ՜...

Ժիւլի. — (Ժպտելով) Սոսկալի է անանկ չէ՞:

Ժանն. — Գոնէ պիտի ամուսնանան:

Ժիւլի. — Ո՛չ. Մարկրիթ պիտի ուզէ ամուսնանալ, սակայն զօրաւորը չպիտի ամուսնանայ, որովհետեւ Ամերիկուհի մը պիտի սիրահարուի:

Ժանն. — (Մտածկոտ) Ի՞նչ աղէկ է էրիկ մարդ ըլլալը:

Ժիւլի. — Մտիկ ըրէ՛, վերջի մասը աւելի սոսկալի է:

Ժանն. — Տեսնե՛նք.

Ժիւլի. — (Կարգաւով) Մարկրիթ քանի մը վայրկեան ունկնդրեց ձիուն դուրիւնին որ հեռուէն կ'արձագանգէր գիշերին մթութեանը մէջ: Մարկրիթ սենեակ դարձաւ դողդոջ քայլերով... Գինովի մը պէս. առտուն մեծ ձի մը արձակեց. տեսաւ որ մայր պիտի ըլլար:

Ժանն. — (Յուզուած) Օ՛հ, խեղճ աղջիկ, սարսափելի է, առ...

Ժիւլի. — (Հպարտօրէն) Ասկէ աւելի սարսաղդեցիկ վէպ չենք կարդացած, անանկ չէ՞, Ժա՛նն...

Ժանն. — Իրաւ որ... (Լռութիւն) Շատ աղէկ, Ժիւլի, Մարկրիթ ինչէ՞ն հասկցաւ որ պէպէք պիտի ունենար...:

Ժիւլի. — (Սրտնեղած) Չգիտնայի՛ր, ամէն կին ինչպէս որ կը հասկնայ: Ասոնք անանկ բաներ են՝ զորս աշխարհք արարատ գիտէ: Առաջ ուրնէ կը հասկցուի ատիկա. կ'ըսեն. «Տիկին այնինչը պէպէք մը պիտի ունենայ»:

Ժանն. — Անանկ է ա՛...

[Բիշ մը կը մտածեն երկուքն ալ... Ժիւլի տեսարկը կը գոցե եւ դարակին մէջ կը դնէ կղպելով. Ժանն կամաց կամաց սենեակը կը մտնէ]:

Ժիւլի. — Կը պառկի՞ս կոր:

Ժանն. — Այո՛, Ժիւլի՛, գիտե՞ս թէ տաղանդաւոր աղջիկ մըն ես:

Ժիւլի. — Իրա՛ւ. կը կարծե՞ս. ԺօրԺ Սանէ՞ն ալ գեղեցիկ է իմա:

Ժանն. — (Վայրկեան մը կը մտածէ արդար գնահատութիւն մը ընելու համար): Ես ասիկա աւելի խիստ կը գտնեմ. բայց ամբողջութեանը մէջ լաւ գրութիւն մըն է:

Ժիւլի. — Շատ պիտի ուզէի որ տպուէր... Թերթի մը մէջ հրատարակուէր... դուն չը՞պիտի բաղձայիր ատոր:

Ժանն. — Ո՛չ, ես պիտի ուզէի զօրավարին պէս մէկէ մը սիրուիլ:

(Երկուքը մէկ կը սկսին երազել):

Ժիւլի. — Գիշեր բարի, ես պիտի պառկիմ:

Ժանն. — Ես աղօթքս պիտի ընեմ:

Ժիւլի. — Ես աղօթքս ըրած եմ:

(Զիրար կը համբուրեն: Ժան դուռը կը գոցէ իր ետեւէն. Ժիւլի կը պառկի):

Թարգմ. ԹՊ

ՄԱՌՍԷԼ ԲՈՒՎԼՈ

ԿԱՐԱՊՆԵՐԸ

Il est d'étranges soirs, où les fleurs ont une âme.

ALBERT SAMAIN

Գիշեր է լուռ, հանդարտ գիշեր ամառուան.

Մութը պատեր է երկինքը համօրէն.

Հեռունեղէն փոքի մը լոյսեր միայն

Իրենց ձիւնը վար կը կաքեն յուլօրէն:

Ո՛չ մէկ շրջուկ: Լաւութիւնը կը քրքուայ

Անձի՛ր, անձա՛յր լայնութեան մէջ օդերուն.

Ու բացխփուող աչկերու պէս, ափին վրայ,

Քաղաքներու կը պլպլայ լոյսն հեռուն:

Բարձր, մութին ալկերուն մէջ, հեռակայ

Ժիւրաներու ստուերը լուռ կը մտափէ.

Աւելի՛ վեր, արհամարհոտ ու հսկայ,

Ալպեաններու սէզ ցալաւան է ստափէ:

Հոյզ ալեփառ շղթաներու դարուար

Օրումին մէջ ընկողմանած հոլանի՛,

Լեռներու վեհ հուրիներուն պէս աղուար,

Կը բընանայ կապոյտ հոգին Լեմանի:



Գիշերն է լուռ, լինը սրտում: Հեռուն,

Հանանչներու, փրփուրներու պէս աղուար,

Քնացող ջուրին երեսին վրայ մեղմօրէն

Նրկու կարապ կը սահին լուռ, մեմուար:

Իրենց մարմինը ֆնֆոյս է, գեղեցիկ.

Իրենց քեւերն արծաթակետ, ձիւնադէս.

Ու մարմարի իրենց վիզը սրբացիկ՝

Նրազային սանաւներու սիւնին պէս:

Կը մօտեան անոնք իրար մեղմովին,

Ու կտուցին իրար կուտան ուղղակի,

Այնպէ՛ս ինչպէս ո՛չ մէկ շրթունք ցալալին

Ա՛յնման սիրով չէ՛ մօտեցած շրթունքի:



Ու ձիւնափառ իրենց քեւերն կ'առնեն վեր,

Կը գալարեն իրենց՝ վիզը երկնապալաց,

Ա՛յնպէս ինչպէս երկու բազուկ անձնուէր

Սոյքա՛ն սիրով իրարու չէ՛ն գալարած:

Գիւղերուն լոյսը կը ցոլայ հեռուէ՛ն.

Վերը Ես՛ւնք ժիւրաներուն հեռակայ.

Աւելի՛ վեր, Ալպեանները համօրէն.

Աւելի՛ վեր, Նրկի՛նք կանգներ է վրկայ . . . :

Վա՛րը, ֆնացող ջուրին վրայ սրամարար,

Վեհ պարսփի մը գիտակցութեամբը լիցունած,

Բերան բերնի, վիզը վիզին, անբարբա՛ն,

Կարապները կը մնան լուռ փարցած . . . :

ՌՈՒՐԷՆ ԶԻԼԻՆԻՐԵՍՆ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒՂԻ ՄԸ

Ամերիկայի մէջ զեղարուեստի կեանքին նուիրուած քանի մը տաղանդներէն մէկն է Օր. Անժէլ Զօփուրեան: Հարթֆըրտի Զորրորդ Եկեղեցիին Սոփրանօ Սօլօ երգողն է հիմա Օրիորդ Զօփուրեան, պաշտօն մը զոր չորս տարիներէ ի վեր կը վարէ մեծ յաջողութեամբ: «Քընէթիքէթի աւ. բողջ նահանգին մէջ ճանչցուած է իբր իրական արժանիքներու տէր արուեստագիտունի մը», կ'ըսէ Հարթֆըրտի «Քընէթիքէթի» օրաթերթը: Զորրորդ Եկեղեցիին մէջ տրուած սրբազան երաժշտական հանդէսի մը առիթով գրած իր մէկ յօդուածին մէջ և կ'աւելցնէ. «Կատարելապէս ուշիմ ուսումնասիրող մըն է երաժշտութեան, համակուած երաժշտական բարձր իտէլաներով և ապագայ մը ունի իբր երգիչ Ամերիկեան Նուագահանդէսի»: Եկեղեցական երաժշտութեան ամենալաւ կտորներուն ընտանի է Օրիորդը և հիմնալի կերպով կը մեկնէ Մէնարլանի, Հայտնի, Հանտէլի, Սմէյնըրի, Պրքի ու Զէտուիի նման վարպետներու գործերը: Քաղցրահնչուն և ուժեղ ձայն մը ունի, լաւ մարզուած, որով կրնայ երաժշտութեան զեղեցկութիւնները արտայայտել համոյտութիւն եղանակով մը, իր մշակած երաժշտական ճիւղերն են Սրբազան Երաժշտութիւն (Oratorio) և Նուագահանդէսի Երգեցողութիւն (Concert Work), որոնց մէջ Prima Dona մասերը կը ստանձնէ կատարելա յաջողութեամբ: Կը պատրաստուի նաև Grand Opera գործին, երաժշտական քննադատ մը հետեւեալը կը գրէ իր մասին. «Իրողութիւնը ակներեւ է բոլոր անոնց որ տեսած ու լսած են Օր. Զօփուրեանը թէ, շատ չանցած Ամերիկայի առաջնակարգ Սոփրանօներէն մէկը պիտի հանդիսանայ ան, որովհետեւ այդ վախճանին հասնելու համար ո'չ կարողութիւն, ո'չ ճարտարութիւն և ոչ ալ փառաբերութիւն կը պակսի իրեն»: Ժողովրդական ու յաջող ուսուցիչ մըն է նաև Օր. Զօփուրեան: Արագ յառաջդիմութիւն մը ցոյց կուտան իր առաջնորդութեանը տակ ձայնական երաժշտութեան հետեւողներ, ինչպէս կը վկայէ Տէնպըրիի Երաժշտութեան Ակադեմիին վարիչը, ինչ որ ապացոյց մըն է թէ իր

պաշտօնը լաւ հասկցող կարող ուսուցիչ մըն է ան: Պօլիս մնած է Օրիորդ Զօփուրեան. հօրը կողմէն իր մեծ հայրը հարուստ սեղանաւոր մըն է Պօլսոյ մէջ, իսկ նշանաւոր բժիշկ մըն է իր մեծ հայրը՝ մօրը կողմէն: Երկու զերդաստաններն ալ մեծ սիրով մը յարած էին արուեստի ու երաժշտութեան, այնպէս որ ցեղային ժառանգական ձիրք մը կրնայ նկատուիլ Օրիորդին ցոյց տուած երաժշտական ընդունակութիւնը: Իր հայրը աւարտած է ընթացքը Պերլինի Արքայական Աստուածաբանական ձեմարանին և ուսուցիչ մը ու աստուածաբան մըն է եղած: Դպրոց մը հիմնած է Պօլիս, որ 15 տարիներու զոյուծիւն մը ունեցած է: Անկէ ետքը եկած հաստատուած է Ամերիկայի Օրիորդ Զօփուրեան չորս տարեկանին ընտանիքին հետ՝ ոտք կոխած է Ամերիկայի ափերը: Պզտիկ հասակէն զօրաւոր հակում մը ցոյց կուտայ Օրիորդը երաժշտութեան. տասերեք տարեկանին՝ երաժշտութեան դաս առնել կը սկսի: Յետոյ ընթացքը կ'աւարտէ Տէնպըրիի Երաժշտութեան Դպրոցին՝ Նոյն քաղաքին մէջ եկեղեցիի մը կողմէն պաշտօնի կը հրաւիրուի իբր երգեցիկ խումբին վարիչ ու իբր մենբրզուհի՝ քսան տարեկանին: Տարուան մը պաշտօնավարութեան վախճանին՝ նման պաշտօն մը կը ստանձնէ Ժողովական Եկեղեցիին մէջ, զոր կը վարէ նշանակելի յաջողութեամբ: Իր առողջութեան թերեւեալ տալով՝ հրաժարել կը ստիպուի և անմիջապէս ուրիշ քաղաքի մը Ժողովական Առաջին Եկեղեցիէն կը հրաւիրուի մենբրզ երգելու և կ'ընդունի հրաւերը: Հոն երկու տարի պաշտօնավարելէ ետքը, կը ստանձնէ Հարթֆըրտի Զորրորդ Եկեղեցիին Սոփրանօ Սօլօն երգելու արդի պաշտօնը, զոր չորս տարիներէ ի վեր կը վարէ մեծ յաջողութեամբ: Իր անունը քաջ ծանօթ է հիմա այդ ամբողջ նահանգին մէջ, ուր կը փնտռուի նուագահանդէսներու մէջ մենբրզներ երգելու համար: Այս ձմեռ ի մէջ այլոց երգելու հրաւիրուած էր Նիւ-Եօրքէն, Նիւ-Հէյվընն ու Պոսթընն: Յարատեւ ուսանող մըն է Օրիորդ Զօփուրեան: Առանց զո՞հ ըլլալու իր ձեռք բերած փայլուն յաջողութիւններէն՝ ամէն շաբաթ Նիւ-Եօրքէն կ'երթայ երաժշտութեան մեծագոյն վարպետներէն դաս առնելու, որոնց ամէնէն նշանաւորն է Oscar Saenger Գերմանացին:

Մտադիր է, թերևս տարիէ մը, Եւրոպա մեկ-
նիլ, մասնաւորապէս Գերմանիա և Իտալիա,
իր արուեստին բարձրագոյն կատարելագոր-
ծումներուն տիրանալու նպատակով, «Մու-
նուկ հասակէս մեծ սէր մը կը տածէի երա-
ժշտութեան, ըսաւ Օրիորդը խօսակցութեան
մը մէջ. կեանքիս մեծ նպատակը ըլլալ որո-
շած էի երաժշտութիւնը ու պատրաստ էի
ամէն բան զոհել առաջադրած այս նպատակիս
իրագործումին համար: Բնութեանս ինքնա-
բոլիս մէկ յատկութիւնն է երգը, այնքան
դիւրին է ան ու բնական»: Եւ այս պարզ խոս-
տովանութեան մէջ կը գտնենք զազանիքը
ամէն ճշմարիտ տաղանդի կանխագոյն յայտ-
նումներուն: Ինքնայայտնութեան բուռն,
գրեթէ անդիմադրելի ճիզեր կը գործէ հան-
ճարը պատանեկան կեանքի շրջանին մէջ:
Պատանիի մը մէջ որ և է տաղանդի գոյութեան
ամէնէն անխալ նշանն է այն անհուն սէրը՝
զոր ան կը տածէ իր ներքին բնութեան մատ-
նանշած ճիւղին նկատմամբ և այն սիրայօժար
պատրաստակամութիւնը՝ որով կը զոհէ ուրիշ
ամէն բան — հանգիստ, հանգիստ, հարստու-
թիւն և յանախ դժբախտաբար նաև առողջու-
թիւն — իր հոգին ամբողջապէս զբաղող այդ
նպատակին հասնելու համար: Ճշմարիտ տա-
ղանդի երկրորդ յայտարար նշան է այն դիւ-
րութիւնը, ներքին այն ինքնաբոլիս արտա-
յայտումը՝ զոր պատանին կը զգայ իր ըրած
փորձերուն մէջ: Տաղանդի այս երկու բնորո-
շիչ յատկութիւններն ալ բարձրօրէն ցոյց
տուած է Օր. Զօփուրեան, Օտար երկրի մը
մէջ, տնտեսական աննպաստ պայմաններով
շրջապատուած, իր տաղանդին անդիմադրելի
մղիչ ազդեցութեանը տակ՝ տարիներով մա-
քառած, զոհած, ճիզ ծափած է ան, ձեռք
բերելու համար էական պայմանները իր
երաժշտական տաղանդին յայտնութեանը և
մշակումին: Մեծցած ըլլալով Ամերիկայի մէջ
ու սնած ամերիկեան դաստիարակութեամբ,
բնականաբար անդերձնէն է եղած Օր. Զօ-
փուրեանի մայրենի լեզուն, բայց կրնայ խօսիլ
լաւական մաքուր և սահուն հայերէնով մը,
արդիւնք ընտանեկան ազդեցութեան: Քաջ
զիտէ գերմաներէն և իր երգած կտորները
հասկնալու և անոնց ոգիին ծափանցելու
աստիճան զիտէ նաև իտալերէն, լատիներէն
ու ֆրանսերէն: Հետեւեալ գեղեցիկ տողով կը

յատկանշէ Տօքթ. Մընկըր երաժշտութեան
բնոյթը. «Music is harmony, perfection is heaven».
(Երաժշտութիւնը ներդաշնակութիւն է. ներ-
դաշնակութիւնը կատարելութիւն է. կատա-
րելութիւնը երկինք է): Ուրախ ենք որ՝
ներդաշնակութեան այդ երկինքը մարդկային
հոգիներու մէջ վերստեղծող, կատարելու-
թեան խորհուրդը աշխարհի մեկնող ամերիկ-
եան երաժիշտներու շարքին մէջ պատուաւոր
տեղ մը կը զբաւէ Հայ կին մը, Օր.
Անժէլ Զօփուրեան:

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ.

ՄԱՍԻՍԻ

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Մասիսի 23րդ քիւով հաստատւած էինք
պարգէտաւոր Գրական Մրցում մը, որուն
կը հաղորդենք այսօր արդիւնք: Հանդիմով
կը դիտենք որ՝ Մասիսի հաստատւած բոլոր
մրցումները՝ խանդավառ համակրութեամբ
մը կ'ողջունուին ընթերցող հասարակու-
թեան կողմէ: Նոյն ընդունելութիւնը
զատուած մեր վերջին Գրական Մրցումը,
զոր ընթերցողներ կը գտնեն «Ես իմեա-
նիս» և «Ես իմեալս» շանագրգռական-
«Ինչպէս հանելի», «Ես աշխարհաց հորութիւն»:
Այդ մրցումով, ինչպէս կը յիշենք ընթերցող-
ները՝ կ'առաջարկենք հեղեյ իմեմուքիւնը
այն երեք Թրքանայ բանաստեղծներուն, որոնց
առաջարկած էինք յաջորդական երկու հաւ-
եակներ գրել, կերպարանելու համար այն
երթումը, զոր հրատարակած էինք քիւ
23 Մասիսով: Բազմաթիւ մրցողներ՝ հե-
զիտէ հասցուցին մեզ իրենց պատասխան-
ները, 75 հաս զաւաններէն եւ 106 հաս
Պոլիսէն, որոնց մէջ զարմանով կը դիտենք
թէ՝ մէկ հոգի մը միայն՝ Տիար Արեալ
Նուրեան՝ յաջողած է անսխալ հեղեյ երեք
բանաստեղծներուն ալ իմեմութիւնը. հետեւ-
եալ կերպով, ինչպէս իրողութիւնն էր: —

Ա. երկու հաւեակները գրած է
ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Բ. երկու հաւեակները՝
ԱՂԵՔԱՆԴԻՐ ՓԱՆՍԵԱՆ

Գ. երկու հաւեակները՝
ԱՐՏԱՇԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Տիար Արեալ Նուրեան (Մանուս-Փա-
շա, Գամաճո Խանիկ Եւ, քիւ 73, խա-
լուի) կը ստանայ մեր պարգէտը, գեղար-
ուեստական գեղեցիկ ու արժեքաւոր աւելա-
նութիւն մը, — իրաների որմանկար մը՝
Ֆառաքը եւ Մարկիթը ներկայացնող:

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Դ Է Մ Ք Ե Ր

ՇԱՍՊԵԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՒ ԼՈՒՏՎԻԿ ՈՒԼԱՆՏ

Կէօքէն առաջ, դասական, բոլոր ուսկար է գերման բանաստեղծութիւնը, մեծ մասով ժամանակակից վրայէն ընդօրինակուած: Այն ասէն, կեղծամագաղղ տերբոյները՝ սենեակին նստած՝ բնութիւնը եւ գաւառներ, սէրը եւ սիրունին կը գեղեցիկն, առանց ճեմնելու, առանց զգալու: Կէօքէն է որ կենսայիւր, պարուած ու ճեմարիս բանաստեղծութեան առաջին օրինակը կուսայ, մինչեւ այն ասէն սերեւերուած, բռնագրօսիկ ու նմանողութիւններով ապրող երբուածներուն մէջ: — «Ես սէրը երգեցի երբ սիրահար էի», կ'ըսէ ան իր ծերութեանը: — Ու իրաւ ալ, իր բոլոր երբուածները ապրուած կնանկի դուրսգետ, ճառագած հոգիի հառաչներ են, զլացուած իրական հասուածներ եւ ասոր համար ազդու եւ յուզիչ: Ուլան, սակայն, ինչպէս Շվապեան Դպրոցին բոլոր ներկայացուցիչները, աստիճան մը աւելի իրական է Կէօքէն, որուն երգը վեապահութեան ու քաղցեցիկ բարձրութեան շունչ մը ունի: Գեղարուեստագէտի կապերէ ազատ ու անկաշկանդ, Ուլան գրեթէ ծայր աստիճանի տարած է իր բանաստեղծի զգացումներուն անկեղծութիւնը, սկզբունք ունենալով քսել այնպէս, ինչպէս կը զգացուի, կեանքը ներկայել այնպէս ինչպէս կ'ապրուի, առանց ուրիշ որ եւ ի նկատարութիւն ճանչնալու: Հետեւաբար չգարուցներ, այլ կը հիացնէ ընթերցուի այն ներդաշնակ ու իսկական՝ առանց եղանակի երգերուն, որոնց մէջ լեզուն քաղցրանչիւն, զոգսրիկ մեղեդի մը կը դառնայ:

Ժ. Գարուն առաջին հառորդին մէջ, Ուլան կը հաւաքէ բոլոր իր այն բանաստեղծութիւնները, որոնք մինչեւ այն ասէն ցանցնուած էին զանազան հանդէսներու եւ տարեցոյցներու մէջ. հաւաքածոն հետզհետէ կը ստուարանայ, առանց սակայն ընդհանուր ձեւը զգալապէս մոխրուելու: Միայն բանի մը ժամանակակից երբուածներն են

տարբեր կը ներմուծեն անոր մէջ: Այս միջոցին է որ Ուլան իր տաղանդին կատարելութեան սահմանը քննակոխած էր. իր գործը պէտք եղած ուղղութիւնը առած էր արդէն՝ աւելի վերջը նոր դպրոց մը, գրական նոր խմբակցութիւն մը կազմելու համար, տարբեր ուսմանքի մէջ դպրոցէն, առանց դուրսեան, սոսանց բնագոյնութեան, բէլ անոր մէկ տարանջատ հնչու էր: Բան մը որ զինքը Շվապեան Դպրոցը խմբակցութեան մէջ ամէնէն աւելի կը յատկանշէ եւ ինքնասպառիւն մը, ճեմարիս գերակայութիւն մը կուսայ իրեն, իր սեղմ, ներկու ու հակիրճ ոնն է, որ շատ անգամ ուժ մը կը դառնայ իր երբուածներուն մէջ, այնքան իր պոսիկ ու պարզ նկարներուն մէջ աղէկ գիտէ զանկ իրական ու ճեմանկելի անցները: Իր գեղոններէն մէկ փոխները, որոնց մէջ այնքան կատարելութիւն տուած է իր խակասիպ ոնին, ըլլալ կը թուի «Nibelungen»-ներու հին բանաստեղծութեան տարանջատուած էջեր. ուրիշներ, ինչպէս «Հնունիս» կարնանոս տալի մը զաւարտութիւնը կ'ընեն: Երբեմն կը բաւականանայ խաբուսիկ զաւարտութիւններու նօթերով միայն արտայայտել իր տեսածը եւ զգացածը, ճիշդ ինչպէս պիտի ընէր մարդ ուղեւորական յուշանոցի մը մէջ: «Մարգերու կանանչութիւն, մանիշակներու բոյր, — աստիճան զայլալիկը, սարեակին գեղանքը, — արեւին ոսկի անձրեւը, օդին անուշութիւնը. — Երբ այս բառերը կ'երգեմ. — դեռ ի՞նչ պէտք է ուրեմն, — տոնելու համար, ո՛ր զարնանային օր»:

Ժողովրդական երգի ձեւն է աս, որ իրերը կը մասնանշէ աւելի քան կը նկարագրէ, որ ոչինչ կ'ըսէ անոր որ բան մը չզգար ինքնիրմով, որ շատ հակիրճ, շատ կտրուկ կըմայ երեւալ, բայց չիմար աւելորդութիւններու մէջ: Խոսքած բանաստեղծութիւնն է աս Ուլանի, որուն համբաւը աւելի մեծցաւ իր մահէն ետք (1862ին), եւ ինք ոչ միայն կարգացուեցաւ, այլ երգուեցաւ ալ, Գերմանիոյ չորս կողմը, եւ մտաւ դասականներու երկ ոչ ամէնէն մեծ, գոնէ ամէնէն ժողովրդական խումբին մէջ:

ՄԵԼԻՔ-ՔԵՎԷՔԷԼ

ԱՐՁԱԳԱՆԳ

Կ. [Մ. Իւլ-Ա. Գիգ]. — Ձեր քերթուածը՝ չարափոխուած reminiscence մըն է Արտաշէս Յարութիւնեանէն:

Կարդանք. —

Ո՞ր կը քրուարսիփ այդպէս սեւ ամպեր կը վազէր դուք կանգ չէք առներ երբեք. Ո՞ր մ'ը կը փախիփ այդպէս վերեւէն:

Հիմա կարդանք Յարութիւնեանը. —

Ամպեր, սեւ ամպեր, հէ՛յ, ո՞ր կը քրուարսիփ. Սանճիւղ այդպէս կ'այդոյսի՞ն ծոցէն.

Ի՞նչ տարբերութիւն կ'այ երկուքին մէջ: Յետոյ. —

Ամպի կտորներ, սեւ սեւ կա(ն)կառուն, Ձեռնդեցէ՛ք ձեր հոսիայ ծոցին մէջ էջ մը տալանալի եւ միայն մէկ էջ Սիրս մը կ'արեւիկէ, կ'առտով գնդուն.

Գրէ՛ք ձեր գրկին մէջ, տարէ՛ք ամոր . . .

Ձեր կարիքներուն հետ վրձիս, յսակ, Կաթիլ մ'ալ ինձմէ առած շիփ շիսակ Գացէ՛ք հոն . . . ըսէ՛ք ցաւերս նորանոր:

Կարդանք Յարութիւնեանը. —

Աչերուս ցոլէ՛ն՝ ձեր փայլակներուն Բոցէ Եայիկին մէջ ծրարեցէ՛ք. Եւ հառաչներէս՝ վանկ մը մոլորուն Ձեր ոռոտմիմ ծոցին մէջ դրէ՛ք:

Կաթիլ մ'ալ արցունք՝ իմ արցունքներէն Ձեր անձրեւներուն խառնեցէ՛ք, ամպեր, Ամէնքն ալ առէ՛ք ու տարէ՛ք իրեն,

Ինձ՝ իմ ցաւիս իբրեւ լրաբեր:

Կը դիտէ՞ք թէ մեծ տարբերութիւն մը չտիրեր ձեր և Յարութիւնեանի տողերուն մէջ: Եւ յետոյ, ո՞ր անոր շունչին հոյակապ վեհութիւնը, զրաւիչ բանաստեղծականութիւնը, մարդկայնութեամբ բարախուն տալու. նը, ո՞ր ձեր տողերուն ոտնաբեկ կաղաղնացութիւնը, անհրապոյր դանդաղութիւնը, վարժապետական ճոռոմախօսութիւնը: Ձեռք ըսեր թէ չգրէք, բայց ջանացէ՛ք չազդուիլ ուրիշներէ, մանաւանդ չկեղծել ուրիշները, չչարափոխել, Լաւագոյնին յառելու ջանքին մէջ կրնաք փնտռել ձեր յաջողութիւնը:

Հիմնադիր. Կ. Ս. Իվիտիձեւ: Արտօմատ. ՅՕԲԹ. Ե. ՄԵՍԻՍ: Տպագր. ՍԱԳԱՆԱՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Բարիգի Համալսարանին մէջ, Իրականութեան Տօրթօրի քննութիւն անցուցեր է բարեբոյցի Պրն. Մամբրէ Մատէնճեան, որ իր նախնական ուսումը ստացած է Գէորգեան ճեմարանին մէջ, իր աւարտական ճառին (եհօսե) նիւթ ըրած է հին Հայ բանաստեղծական արուեստը և տաղաչափութիւնը, զոր ֆրանսերէն գրած ու ապագրած է: Զինքը քննած են զրազիտութեան երեք ծանօթ բրոֆէսէօրներ, Լիւիլ Ֆակէ, անգամ ֆրանսական Ակադեմիի, Անդուան Մէյլէ, հայագետ, ուսուցիչ համեմատական լեզուաբանութեան Սօրպօնի Համալսարանին և Փօլէժ տը Ֆուանսի մէջ, և Միշէլ Րըվօյէ, ուսուցիչ Համալսարանի մէջ ճարտարական գրականութեան, պատմութեան ու Ֆիլօսօֆիայի, Այս վերջինը մեծ նմանութիւն գտեր է հին Հայ դիցաբանութեան ու դիցաբանական քերթուածին և ճարտարական դիցաբանութեան ու բանաստեղծութեան միջեւ: Երեքն ալ հաւնեք են ներկայացուած գործին և միաձայնութեամբ իրեն տուել են Docteur ès-lettresի աստիճանը, ունկնդիրներու ժափերուն մէջ:

★ Հաճոյքով կ'արձանագրենք թէ՛ ծանօթ ատամնաբուժ. վիրաբուժ Տօրթ. Սահակ Դանճեանէֆ. ներքին ատամնաբուժ կաղզուած է Շիրշիի Պուլկարական Հիւանդանոցին Պուլկարական Հիւանդանոցին կողմէ՛ Տօրթ. Դանճեանի եղած այս պատիւը՝ արժանի գնահատութիւն է այն ձեռնհասութեան՝ որով միշտ փայլած է ան իր արուեստին մէջ:

★ Ամենայն Հայոց Ս. Հայրապետը աղանակու լանջախաչ շնորհներ է երզնկայի առաջնորդական տեղապահ Տ. Լիմանուէլ վրդ. Պալեանի, իր բարւոք ծառայութեանց իբր վարձք:

Տեղի չտալու համար վրիպակներու, — որոնց սպրդումը հալածելու փափաքող ենք միշտ, — կը խնդրուի մեր աշխատակիցներէն յատկապէս զրեւել երկրի մի ընթերցանութեան տօրիժ տուող բառերը, մանաւանդ քիչ ծանօթ հազուադէպ յատուկ անունները, գոնէ:

«Մ Ա Ս Ի Ս» Ի Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ը

ՊԱՏԱՍԽԱՆ. — Մասիսի զուարթ հարցումներէն է. րդին թէ՛ Ո՞ր սարիքին աւուսնանայ հաճելի ե կնոջ մը համար. այր մարդո՞ւն համար. եւ ինչո՞ւ ստացուած պատասխաններէն կը հրատարակենք հետեւեալ ամէնէն յաջողը, որուն տէրը կը ստանայ իբր մրցանակ ամերիկեան Ժամացոյց մը: — Կիներուն համար ամուսնութիւնը փափաքելի է ո՞ր տարիքին մէջ որ ալ ըլլայ, մինչեւ այն օրը երբ դեռ չեն ամուսնացած: Անգամ մը սակայն գլուխնին էրիկ մարդու մը միացնելէ ետքը... կարօտը կը զգան իրենց աղջիկնութեան, երազելով շուրջերնին տեսնել հոյլը այն թիթեռնիկներուն՝ որոնք իրենց տարիքին թիւը մոռցնել կուտան: Ամուսնացածի վիճակը՝ կիներուն համար այն վիճակն է՝ որուն մէջ չեն ուզեր երբեք տեսնել ինքզինքնին: Իսկ էրիկ մարդիկ աւելի կ'երազեն քառսունքը իրենց տարիքին, որովհետեւ անկէ ետքը ալ երեսնին նայող չեն ունենար շատ, և էրիկ մարդիկ կ'ենը իբր Կին կը փնտռեն, երբ ձրի ակնկալութիւններ չունին այն տեսակ թեկնածուներէ, որոնք էրիկի մը կնիկը ըլլալու երազէն հրապուրուած կը մղուին աս կամ ան երիտասարդին:

Սկիւսար ԱՐՏԱՇԷՍ ԶԱՐԾՅԱՆ

Ը. ՀԱՐՅՈՒՄ. — Սիրոյ մեջ ի՞նչ ե մեծագոյն յուսախաբուիւնը: Պատասխանները կարճ և սրամիտ պէտք է ըլլան: Կ'ընդունուին մինչեւ չորեքշաբթի իրիկուն: Յաջողագոյնը կը ստանայ գեղեցիկ դրամապանակ մը:

Ա. ՀԱՐՅՈՒՄ (Գաւառացի Ընթերցողներուն). — Գաւառացի երիտասարդը պոքսեցի՞ թե գաւառացի աղջկան հետ կ'ուզե աւուսնանայ եւ ինչո՞ւ: Պատասխանները կ'ընդունուին մինչեւ յունիսի վերջը (Թ.): Յաջողագոյնը կը ստանայ Մասիսի Ալպօմ մը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր բաժանորդագիրը և թերթերը կը փութացնենք. — Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատր. Վեհապետեան, Տ. Թորգոմ Վարդ. Գուշակեան, Տ. Մեսրոպ Վարդ. Նարոյեան, Տ. Գրիգորիս Վարդ. Պալաքեան, Տ. Էմմանուէլ Վարդ. Պալեան, Տ. Գէորգ Վարդ. Ասլանեան, Տ. Թորոս Սարկ. Պաղտատարեան, Տեարք Վսեմ. Գէորգ Ասլանեան, Վահան Մատթէոսեան, Վահան Տապապղեան, Աստուածատուր Խաչատրեան, Խաչիկ Կիւլէրեան, Յարութիւն Հէլվաճեան, Մկրտիչ Պօղոսեան, Մելիք Թէվէքէլ, Վեր. Փառնակ Իսքէնտէրեան, Վեր. Սարգիս Մանուկեան, Նշան Եղեկիէլեան, Պ. Մողեան, Վ. Մոսկոֆեան, Լ. Աֆիոնեան, Գէորգ Սարաֆեան, Պետրոս Փողարեան, Պօղոս Սիմոնեան, Խաչ. Բաղտատարեան, Տօքթ. Մ. Մարտիրոսեան, Բ. Էսէֆեան, Արմենակ Մարեան, Ժան Պալիէֆ, Յակոբ Բուրիկեան, Սիրական Գլըճեան, Ն. Բիրսքի, և Հայ ընթերցատուն Գահիրէի:

ԹԼԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնային Գարահիսարեան. — Ինչպէս ամէն տեղ, նմանապէս Շ. Գարահիսարի Հայ համայնքը խորունկ վիշտով մը համակուեցաւ, Պերպէրեան

էֆ.ի անակնկալ մահուան գոյժը առնելով: Տեղիս Աղգ. Վարժարանի Ուսուցչութիւնը սգահանդէս մը սարքեց, որուն նախագահեց՝ Առաջ-նորդ Ս.ին հրամանով, Տ. Վաղինակ վրդ., իր շուրջը ունենալով Պատ. Հոգաբարձութիւնը: Աշակերտներէն և ուսուցիչներէն ոմանք կարգով մեծ ուսուցչապետին ձիրքերը և կրթական ու գրական չքնաղ արդիւնքները պարզեցին և կորուստին մեծութիւնը ցոյց տուին: Նախագահ Ս. Հայրը հակիրճ բանախօսութեամբ մը զրուատեց Պէրպէրեանի հաղուագիւտ ձիրքերը:

ԿԱՐՄԻՐԵԱՆ

Երզնկայեան. — Բաղմարդիւն ուսուցչապետին՝ Պէրպէրեանի յիշատակին հոգեհանդիսմով պաշտօն մը կատարուեցաւ Ս. Երրորդ. և կեղեցիին մէջ, ուր խուռն բազմութիւն մը հաւաքուած էր: Տեղապահ Հայրը ընտիր դամբանական մը խօսեցաւ: Եկեղեցիէն վերջը սգահանդէս մը տրուեցաւ Կեդր. Ուսումնարանին մէջ: Բեմին ճակատը ծածկուած էր սև շղարշով և կեդրոնը կախուած՝ ուսուցչապետին մեծադիր պատկերը, զոր նկարած էր Պրն. Վաղինակ Մէչկոյեան: Զարմայր էֆ. Ճերմակեան պարզեց ուսուցչապետին կրթական արդիւնաւոր գործունէութիւնը: Մանուկ էֆ. Գուլումճեան Զօն մը կարդաց: Պ. Սարգիս Քէօլեճեան ոտանաւոր մը արտասանեց, զոր հեղինակած էր աւագ-ուսուցիչ՝ Մամիկոն էֆ. Վարժապետեան: Ամէնէն վերջը Տեղապահ Հայրը թուրքերէն լեզուով փայլուն աստեարանութեամբ մը զրուատեց հանգուցեալը և հանդէսը վերջացաւ «ո՛վ խաչափայտ» աղօթքով: ԴԻՏՈՂ.

Խարքերդեան. — Ի նպատակ Ռեթէոս էֆ. Պէրպէրեանի Եփրատ Գօլէճի երկեցադոյն կարգին նախաձեռնութեամբ նուազահանդէս մը տրուեցաւ: Մասնակցութեան լայն բաժին մը ունեցան Պ. Պ. Խաչատուր Պուճիգանեան եւ Սուրէն Նահիկեան՝ դաշնակով և Պ. Պ. Աւետիս Մովսէսեան եւ Տիգրան Եղիկեան ջութակով: Զուտ հասոյթ 10 օսմ. ոսկի:

ՄԻՀՐԱՆ Մ. ԹԵՐԻՍԱՆԵԱՆ

Եփրատ Գօլէճի չրջանաւարտ սաները Յունիս 2/15ին շքեղ հանդէսով մը բաժնուեցան դպրոցէն: Ամաւերջի և վկայականներու բաշխման հանդէսը Յունիս 13/26ին տեղի պիտի ունենայ: «Ճիւղերը» կարգին կողմէն Պ. Կարապետ Յովակիմեան «Երթա՛յք բարեաւ»ի ճառը կարդաց. իսկ չրջանաւարտներէն Պ. Յովհաննէս Նահիկեան և Պ. Միհրան Թէվրիդեան «Մնա՛ք բարեաւ»ի և բաժանման ճառեր արտասանեցին:

Հ. Գ. ԹԻԻՖԷՆԿՃԵԱՆ


Պարտիզակեան. — Ամերիկ. Բարձր. Վարժարանի ամաւերջի հանդէսը տեղի ունեցաւ 12/25 Յունիսին. ընթացաւարտները կարդացին իրենց աւարտական ճառերը: Պ. Հր. Մալխասեան Երեմ Բաղդաճեան: Պ. Օթթօ Պաղտասարեան՝ Բեռլինայի Արշաւանկեան: Պ. Վահրամ Յակոբեան՝ Երաժշտութիւն: Պ. Մ. Ալթունեան՝ Կրթութեան Ապագան: Ճառերը թէ լեզուի և թէ խորհուրդի տեսակէտէ անթերի էին: Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր դաղիական օրտերը: Այս վերջին օրտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշաբթի օրերը միայն ձրի:

(8—10)



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետև լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բոլորնապէս աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

ԿԵՆՏՐՈՆ
ՄԱՍԻՍ
ՍԻՆԿԵՐ

- | | |
|--------|---|
| ԿԱՆԱԹԱ | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343. |
| ԲԵՐԱ | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ, |
| ՊՈԼԻՍ | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| ՍԿԻՏԱՐ | 2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| | 1. Սուլթան Համամ. |
| | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13. |
| | Զարչը Պօլու, Թ. 120. |
| | Դասերը եւ նորագոյնները ձրի. |

կատարեալ երազխաւորութիւն:

Մասնաձեռք գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

(9—10)

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան

60 դրշ. :

Արտասահմանի

» »

14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները ,
միշտ ձրիաբար , Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :

Զհրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

«ՄԱՍԻՍ»-ի Հասցէին

Գուրգունլու խան, թիւ 7, Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

درعليه غلظه قورشونلى خانه نمره ۷ «ماسيس» غزتمسى اداره خانه

Rédaction de la Revue «MASSIS»

Nº. 7, Courchounlou Han, Galata.
CONSTANTINOPLE

ԲԱՅՄԱՆԻԿ ԱՌԻԹ ՄԸ ԳՐԱՍԷՐՆԵՐՈՒՆ. — ԶԱՐԴԻԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԵՆ. ՄԻԱՅՆ 20 ՂՐՈՒՇ ՓՈԽԱՆ 60 ՂՈՈՒՇԻ: — 1. Ասորա. վէպ. Բ. Սիլվա. թրգ. Թէրզեան 10: 2. Ասրիկե. վիպերգ. Բաղտասարեան 10: 3. Առողջապահութիւն. Տ.թ. Գէշտիմալճեան 2½: 4. «Ներշնչմունք». Տ. Սէթեան 5: 5. Դիւրուսոյց Մեքոս Անգլ. Բերականութեան. Ասատուրեան 15: 6-7. Ամուսնական Խնդիրներ. 2 հատոր 2½: 8. Սփռականք Ռաւկին. Մ. Յովհաննէսեան 5: 9. Ուղեցոյց Դրագիտութեան Թուրքերէն Լեզուի. Գալպճեան 5: 10. Պիսալոցցի. Լինհարտ Գերտորդ 5: Այս 10 կտոր վիպական, առողջապահական, գրական, լեզուաբանական, բանաստեղծական և մանկավարժական գրքերը՝ որոնք 60 դրուշ արժէք ունին, 20 դրուշի կը ծախուին Զարդարեան Եղբայրներուն Դրատունէն՝ Բերա, Գուլէ-Գարու թիւ 695: Գաւառներու համար 7 դրուշ աւելի: Դրասէրներ պէտք է փութան օգտուիլ այս առիթէն, դիմելով վերեւի հասցէին, ուր կը ծախուին նաեւ ամէն տեսակ թուրքերէն, հայերէն և ֆրանսերէն նոր թէ գործածուած գիրքեր, աժան և դիւրամատչելի գրքերով: